

# ՔԱՐՏԵԶ

Չարաճճի Արամն աշխարհագրությունից երկուս էր ստացել և սկսեց բարկությունից պատառոտել դասարանում գտնվող աշխարհի քաղաքական քարտեզը: Արամը «ոչնչացրեց» քարտեզը t վայրկյանում:

Յուրաքանչյուր վայրկյանում նա վերցնում էր քարտեզի ձեռքն ընկած որևէ կտորը և այն բաժանում k մասի: Վերջում Արամն իր առջև տեսավ քարտեզի n կտոր:

Ձեզանից պահանջվում է գտնել այն ժամանակամիջոցը, որի ընթացքում Արամը «ոչնչացրեց» քարտեզը:

## Մուտքային տվյալներ

Մուտքում գրված են երկու ամբողջ թվեր n և k ( $2 \leq n, k \leq 10^9$ ):

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել պահանջվող t ժամանակամիջոցը:

## Օրինակներ

N°	stdin	stdout
1	10 4	3
2	10 2	9